

բերելով Հիմնական Օրէնքներից, որ միմիայն Ռուսիոյ Խռքնակալն է Եկեղեցական հարցերի օրէնսդիրը և որ Եկեղեցին որ և է այլ օրէնսդիր չէ ճանաչում:— «Եւ դա հասկանալի է, — ասում է ատենախօսը, որոհետեւ Դումայի կազմի մէջ մտնում են բազմաթիւ ոչ-Պրովուլաւ դաւանութեան պատկանող տարրեր: Եթէ Ենթադրենք, որ Դուման իրաւունք ունի Եկեղեցական խնդիրների նկատմամբ օրէնքներ գնել, ապա կպատահեն դէպքեր, երբ ոչ-Պրովուլաւ ձայների առաւելութեամբ կվճռուեն Պրովուլաւ եկեղեցու խնդիրներ»:

Գօդն և Ենթադրում է, որ Եկեղեցական կեանքի մէջ նկատուած մեծ վիճը, որով աշխարհիկ դասը բոլորովին հեռացրած է Եկեղեցական կեանքի մասնակցութիւնից, բացուած է շնորհիւ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների: Բանախօսը մի շարք կոչումներով ապացուցանում է, որ կարիք չկայ պնդելու, թէ վանականութիւնն ու եպիսկոպոսական վիճակն ու աստիճանն իրար չեզօքացնող խնդիրներ են: Ապա դառնալով Սինօդի Աւագդատափառքին խնդրում է ամեն միջոց ձեռք առնել, որպէսզի վանականութիւնն ու եպիսկոպոսութիւնն այսուհետեւ այլ ևս իրար հետ կապուած խնդիրներ չինեն:

Կ Ա Թ Ո Լ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի.

Պապի ներկայացուցիչն ապագայի վեհաժողովում:— Յայտնի Արքէ Սօգերնին արծարծում է այն միտքը, որ Եւրոպական պատերազմից յետոյ տեղի ունեցող Վեհաժողովին ներկայ լինի անպատճառ նաև Պապի ներկայացուցիչը: Այդ միտքը նա պատճառաբանում է այն տեսակէտով, թէ Պապի մասնակցութիւնը իրաւական կլինի, քանի որ նա պատերազմը յարուցած օրից անդադար խօսել և քարոզել է պատերազմը դադարեցնելու մասին՝ հաշտութեան անհրաժեշտութիւնը ընդգծելով:

Պապի մասնակցութիւնն այդ Վեհաժողովում, ասում է Սօգերնին, այն բարերար ազգեցութիւնը կունենայ, որ Լեհաստանը, Բելգիան, Սերբիան և Հայաստանը կունենան մի անկախ և անշահախնդիր պաշտպան իրենց դատի համար:

Հ Բ Է Ա Կ Ա Ն

Յօգուտ Ռուսաստանի Հրեաների:— Նիւ-Եօրքից հաղորդում են, որ այստեղ կերնեզիի սրահում տեղի ունեցաւ մի բազմաժողով համախմբում, Լեհաստանում վասարած Հրէաներին օգնութեան հասնելու գործի կազմակերպութեան համար:

Ժողովին մասնակցում էին աւելի քան 3,500 հոգի, ի միջի այլոց և Միացեալ-Նահանգների զանազան քաղաքական կուսակցութիւնների, կազմակերպութիւնների և ազգութիւնների ներկայացուցիչներ: Ժողովը գումարուած է American Jewish Relief Community-ի կողմից, որ նպատակ է դրել ժողովել 1916 թ. ընթացքում 5 միլիոն դոլար, պատերազմից վնասուած ոռւսական Հրէաներին օդնելու համար: Անցած աարուայ մէջ, ինչպէս յայտնէց նախագահը, ժողովուել է $1\frac{1}{2}$ միլիոն դոլարից աւելի:— Ինչպէս հաղորդում են Նիւ-Եօրքի լրագիրները ժողովի բացումից կէս ժամ անց ստացուեցաւ ներկայ եղողներից տնհատական նուիրաբերութիւններ, որոնցից ամէն մէկը հասնում էր 200,000 դոլարի: հետեւեալ նուէրները 5-60 հազար դոլարների նուիրաբերութիւններից էին բաղկացած: Նուիրատունները մտցնում էին իրենց լուման դրամով, չեքերով, թանգարժէք իրերով, ակներով ու զարդարանքներով:

Ժողովի վերջում նուիրաբերողների թիւն հասել էր ահազին քանակի: Հասարակութիւնն, բառիս բուն նշանակութեամբ, նախագահի առաջն էր պարպում իւր գրպանները: Նուիրաբերողներից շատ շատերը պարտաւորութիւն էին յանձն առնում իրենց շաբաթական եկամուտի կէսը զոհելու, չնայելով որ եկամուտը շատ անգամ 7 դոլարից չէր անցնում:

Այդ երեկոյ նուիրատուութիւնների քանակը $1\frac{1}{4}$ միլիոն դոլարից անց էր, զուտ դրամով, չհաշուելով զարդեր և թանգարժէք իրերը:

Ժողովի ժամանակ, յօդուտ պատերազմից վնասուած ու աւելուած Հրէաների ջերմ խօսք ուղեց Գրիէր եպիսկոպոսը, որ ի միջի այլոց ասաց, որ «Քրիստոնէական աշխարհը մեղաւոր է հրէականութեան առաջ»: յորդորեց քրիստոնեաններին ամէն հնարաւոր միջոցներով թեթեացնել աւերուած Հրէաների վիճակը, որ անտանելի և աներեակայիլի է լեհական թագաւորութեան սահմաններում:

Եպիսկոպոսից յետոյ խօսեց Քօրնելիի համալսարանի նախագահը, Նիւ-Եօրքի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, Հիւսիսային-ամերիկայի կօնդրեսի մի քանի ականաւոր ներկայացուցիչներ և լրագրական ընկերակցութեան ներկայացուցիչը,